

ԻՐԱՆԱ-ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՀԻՄՆԱԴՐՈՒՄԸ
(Պատմական ակնարկ)

Գաղթականությունը ահավոր մի չարիք է ժողովուրդների կյանքում: Առավել ևս այն աղետաբեր ու ճակատագրական է եղել մեր «փոքրիկ ածու»-ի համար: Մայր երկրից հայ ժողովրդի մեծ բեկորները հողմացրիվ լինելով, անցյալում, ամայացրել են մեր Աշխարհը: Գաղթական հայերից շատերը ժամանակի ահարկու ձուլման մամլիչի ծանրությանը չդիմանալով՝ ձուլվել ու անհետացել են: Պատմական անցյալում մեր ժողովրդի արտագաղթը սեփական հայրենիքից ունեցել է տարբեր պատճառներ՝ քաղաքական իշխանության կորուստ, բռնի գերեվարություն, օտար տիրապետողների խաբուսիկ հրավերներ, հայրենի երկրում կյանքի և ունեցվածքի անապահովություն և այլ դրդապատճառներ: Հայաստանից արտագաղթը դեպի Պարսկաստան սկսվել է դեռևս Դ և Ե դարերից: Այն վտանգավոր չափերի է հասել թուրք-թաթարական (ԺԱ—ԺԳ դդ.) և մոնղոլական արշավանքների ժամանակ (ԺԳ դ.), երբ Արևելյան Հայաստանը ամբողջությամբ ընկավ նրանց տիրապետության տակ: Հայաստանում ստեղծված անտանելի պայմանների պատճառով ԺԳ—ԺԴ դարերում արտագաղթողների մեծ մասը հաստատվեց նաև Կիլիկիայում, Կիպրոսում, Հռոդոս և Կրետե կղզիներում: Միջին դարերում, հայ ժողովրդի արտագաղթը Մայր Հայրենիքից այնպիսի մեծ չափերի էր հասել, որ նախադրյալներ ստեղծվեցին 1080 թվականին, հեռավոր Կիլիկիայում, Տավրոսյան անառիկ լեռներում հիմնելու Ռուբինյան հայկական թագավորական իշխանությունը:

ԺԷ դարը նոր ցավեր ու հոգսեր բերեց արյունաքամ հայ ժողովրդին և Մայր Աթոռ Ս. Էջմիածնին: Օսմանյան Թուրքիան և շահական Պարսկաստանը քիչ ընդհատումներով այդ շրջանում պատերազմի մեջ էին միմյանց դեմ մոտավորապես 125 տարի (ԺԶ դարի սկզբներից մինչև ԺԷ դարի երեսնական թվականները)[1], որի ընթացքում մեծ մասամբ Հայաստանն էր պատերազմական այն թատերաբեմը, որտեղ կատարվում էին մարտական գործողությունները: 1604 թվականին, Սեֆյան հարստության նշանավոր բռնակալ Շահ-Աբաս արքան (1587—1629 թթ.), երբ գտնվում էր Արարատյան երկրում, խուսափելով օսմանյան բանակի հետ ընդհարվելուց, հրամայում է ամայացնել, անմարդաբնակ դարձնել Հայաստանի բոլոր այն բնակավայրերը, որտեղից պիտի անցներ օսմանյան բանակը: Անգութ բռնավորի հրամանով Հայաստանի վանական գավառներից՝ Լոռուց, Ապարանից, Շիրակից, Մակուից, Սալմաստից, Աղբակից և երկրի մյուս գավառներից ողջ ազգաբնակչությունը բռնի, վենքի

[1] Հայ ժողովրդի պատմություն, հատ. 4, Երևան, 1972, էջ 81:

ուժով, հավաքվում է Արարատյան դաշտավայրը, որի ամբողջ բնակչությունը նույնպես ենթակա էր տեղահանման: Հայ ժողովուրդը իր անցած հազարամյա պատմական ճանապարհին սարսափելի վիճակների շատ էր հանդիպել, բայց այն, ինչ կատարվեց 1604 թվականին, նախադեպը չունեցող գազանային մի ծրագիր էր, որը սպառնում էր հնամենի մեր ժողովրդի ֆիզիկական բնաջնջմանը: «Եւ զայս ամենայն լսելով և գրելով մեր,— ասում է պատմիչը,— ճմլին սիրտք մեր, և գալարին աղիք որովայնի մերոյ, և աչք մեր վտակս արտասուաց թորեալ իջուցանեն, վասն եկելոյ հասելոյ թշուառութեանս ժողովրդեանս մերոյ: Եւ ոչ բաւեմք աստանոր՝ թէ որո՞վ օրինակաւ՝ և կամ որո՞վ տարապու ողբս առեալ աշխարեսցուք ի վերայ բեկման ազգին և աշխարհին մերոյ... քանզի անմարդաբնակ արար միահաղոյն զամենալի և զյուռթի աշխարհս Հայոց»[2]:

Մեծ Խորենացու հայրենասիրական պաթոսով ու ողբով Դավրիժեցի վարդապետը նկարագրում է սրտաճմլիկ մի տեսարան՝ կապված գաղթականության դատապարտված հայ ժողովրդի հետ: Պարսկաստան մեկնելուց առաջ, հայրենիքում վերջին անգամ մեր ժողովրդի զավակները աղոթում են, ապա իրենց սրբազան եկեղեցիների և բնակարանների բանալիները մայր Արաքսի ջրերին պահ տալով, ձեռքները երկինք պարզած, լալահառաչ բացականչում են. «Ո՛վ Սուրբ Աստուածածին, այսոքիկ բանալիք սրբոյ եկեղեցւոյ մերոյ՝ և տանց մերոց քեզ յանձն լիցի. և դու դարձուցես զմեզ ի տեղիս մեր յօտար երկրէն ուր տանին: Եւ զայս ասացեալ արկին զբանալիսն ի գետն, և մորմոքալով յոլով ժամս ձայն բարձեալ լացին. և ապա գնացին»[3]: 1604 թվականին, այսպես դաժանորեն, ծանր պայմաններում հայությունը բռնի բաժանվում էր իր սրբազան հայրենիքից՝ տանելով իր հետ անմոռաց հիշատակներ, բազմաչարչար ու բզկտված Հայրենին վեստին տեսնելու անկոտրում հույսով: Հայ ժողովրդի ազգային զարհուրելի այդ ողբերգությունը մեկ ուրիշ ժամանակակից, Ս. Ստեփանոս Նախավկայի վանքի վանահայր Ստեփանոս վարդապետը քնարական մի բանաստեղծությամբ այսպես է ներկայացրել.

Ափսոս քեզ Հայոց խղճիկ ժողովուրդ,
Ցիր ու ցան եղած անմեղ, անխորհուրդ,
Գերի գնման աք դեպի Խորասան,
Քաղցած ու ծարավ, տկլոր, թշվառական:
Խարյուր ու խալար ցաւի դիմացաք,
Ձեր քաղցրիկ երկրեն ոտ դուրս չդրաք,
Խիմի ձեր խոր մոր գերելման թողաք
Տներն ու ժամը ուրիշի տվաք:

Էս սիրուն դաշտերն, մեծ քաղաքներն,
Քաղցրիկ ջրերն, ձեր շեն գեղերն
Ո՞ւմ աք թողման դուք, որ գնման եք,
Էսպես կլինի՞ որ մոռանում աք:

Վախենում ամ էնպես մտքներացդ ընկնի
Ինչքան որ ողջ աք մտքերնուդ չընկնի...
Բարի ձեր որդվոց թոռանց պատմեցէք,
Էսպես խայրենիքն քանդած թողեցիք:

Մասիսի անունն, Հայոց տապանի,
Արարատ դաշտի, Սուրբ Էջմիածնի,
Մեր Խոր Վիրապի, Սուրբ Գեղարդ, Մուղնի,
Զմոռնաք մինչև օրն դատաստանի:

Աչքս կուրանար, շլինքս կոտրվեր,
Խեղճ Հայաստան, քեզ էսպես չտեսներ
Թե մեռած էի, ինձ երանի էր,
Քան թե կենդանի աչքս բաց տեսներ[4]:

Եվ այսպես, դարավոր մեր թշնամիները հայրենիքից, Մայր Աթոռ Ս. Էջմիածնից հաճախ բռնի պոկել, տեղահանել են նրա զավակներին, հողմացրիվ շպրտել օտար ափեր՝ թողնելով նրանց անթիվ ու անհամար զրկանքների, թշվառության և բացարձակ անորոշության մեջ: Զրկված լինելով իր բուն արմատներից՝ գաղթականության դատապարտված հայ ժողովուրդը ապրելու և հարատևելու իր կենսունակությունը և ավիշը ստացել է հայրենիքի և Ս. Էջմիածնի հետ մշտապես իր ունեցած կենդանի հոգևոր կապի միջոցով: Փաստորեն, այսպես կազմակերպվեցին Մայր Հայրենիքից դուրս գտնվող այսօրվա բոլոր մեր գաղթօջախներն ու հոգևոր առաջնորդությունները: Ամենայն Հայոց Հայրապետներն անցյալում, հաշվի առնելով մեր ժողովրդին հայրենիքից բռնի արտաքսելու տխուր փաստերը, շատ հաճախ ստիպված են եղել արտասուքով ու դողացող ձեռքով հաստատել հայրենիքից ու Մայր Աթոռից աշխարհագրականորեն հեռու գտնվող մի նոր գաղթօջախի կամ հոգևոր թեմի ստեղծումը:

Պատմական այսպիսի դժբախտ և ողբերգական պարագաների ծնունդ հանդիսացավ նաև Իրանա-Հնդկաստանի հայոց թեմի ստեղծումը: Իրանա-Հնդկաստանի հոգևոր թեմը մեր այն գաղթօջախներից է, որը ամենամոտն է հայրենիքին և Մայր Աթոռին:

[2] Առաքել վրդ. Դավրիժեցի, Պատմութ. Առաքել վրդ. Դավրիժեցւոյ, Վաղ-պատ, 1896, էջ 52:

[3] Առաքել վրդ. Դավրիժեցի, Պատմութ. Առաքել վրդ. Դաւրիժեցւոյ, Վաղ-պատ, 1896, էջ 60:

[4] Լեո, Երկերի ժողովածու, հատ. 2, Երևան, 1969, էջ 247:

Պարսկաստանում հայկական փոքրիկ գաղթօջախներ սկսել էին կազմակերպվել դեռևս Դ և Ե դարերից: Ավելի ուշ, ԺԱ դարում, սելջուկ-թուրքերի վայրագություններից խուսափելու համար, մեծ թվով հայեր գաղթում են Պարսկաստան, որոնք հիմնականում հաստատվում են Ատրպատականում և Սպահանի շրջաններում: ԺԴ դարում արդեն բազմահոծ հայություն կար Թավրիզում, Ռեշտում, Մարաղայում և Պարսկաստանի մի շարք այլ քաղաքներում: Դժբախտաբար գրավոր աղբյուրներում ոչ մի հիշատակություն չկա մինչև ԺԷ դարը Պարսկաստանում հաստատված հայության եկեղեցական կյանքի մասին: Հետևաբար ճիշտ կլինի ասել, որ Իրանա-Հնդկաստանի հայոց թեմը հիմնականում կազմակերպվել է ԺԷ դարում Շահ-Աբասի կողմից Հայաստանից բռնի Պարսկաստան գաղթեցված շուրջ երեք հարյուր հազար հայերից:

1604 թ. Մայր Աթոռ Ս. Էջմիածնից, գաղթականության հետ, կամավոր Պարսկաստան աքսորի գնաց նաև Ամենայն Հայոց Դավիթ Դ Վաղարշապատեցի կաթողիկոսը (1590—1629): «Ի ժամանակին յորում շահն կմեծ սուրգունն արար և վազգս հայոց վարեալ տարաւ յԱսպահան, գնաց ընդ նոսին և Դաւիթ կաթողիկոսն»[5]: Հայոց դժբախտ Հայրապետին այդ օրերին ուղեկցում էր Մայր Աթոռի միաբաններից ոմն Մովսես եպիսկոպոս: Հետագայում կաթողիկոսի կողմից հենց այս Մովսես եպիսկոպոսն էլ նշանակվեց Իրանա-Հնդկաստանի հայոց առաջին հոգևոր առաջնորդ, որը «Յետ փոքու միջոցի բարուք կառավարութեան հայրենակորոյս հօտին կնքէ զընթացս մահկանացու կենաց իւրոց, ընդ ցաւօք տարեգրութեան սրտի»[6]:

Դժբախտաբար պանդխտության քշված հայ զանգվածները Պարսկաստանի խորքերում տարբեր ճակատագրերի արժանացան: Գիլանի և Մազանդարայի ճահճուտ շրջանները տարված հայությունը, չդիմանալով բնակլիմայական անտանելի պայմաններին, կարճ ժամանակամիջոցում հիմնականում բնաջնջվեց: Բազմաթիվ հայ ընտանիքներ էլ բռնի մահմեդականացվեցին: Շուրջ 10 հազար գերեվարված հայ երիտասարդ տղաներ և աղջիկներ տրվեցին պարսիկ մեծամեծների մոտ ծառայության[7]:

Հողմացրիվ հայության բեկորները Պարսկաստանում սկզբնական շրջանում գտնվում էին հուսահատ և ծայրահեղ աղքատության վիճակում:

Համատարած դժբախտության այդ օրերին ջուղայահայերն էին, որ նյութական իրենց առատ միջոցներով նպաստեցին և օգնեցին պարսկահայությանը, որը արագ կերպով կարողացավ կազմակերպել իր կյանքը որպես կրոնական ու ազգային համայնք: Հայությունը Պարսկաստանում, իր աշխատասիրության ու ձեռներեցության շնորհիվ, բավական շուտ վերականգնեց նաև իր տնտեսական վիճակը: Իրանա-Հնդկաստանի թեմը, առաջնորդանիստ Նոր-Ջուղա քաղաքով, նմանվում էր մի փոքրիկ հասարակապետության, որը կառավարվում էր հայրենիքից իր բերած ազգային ու կրոնական ավանդություններով: Որպես կրոնական համայնք, Իրանա-Հնդկաստանի թեմի հայ ժողովուրդը «Ի սկզբան անդ համարեալ լինէին տէրունի ժողովուրդի և հնապանդէին Սրբոյ Էջմիածնի»[8]:

Գաղթականությունը հավիտ էր հաստատվել իր նոր բնակավայրում, երբ առաջին հերթին Նոր-Ջուղայում կառուցվում է ժամանակավոր մի եկեղեցի: Հիսուն տարի հետո, 1655 թվականին, թեմական առաջնորդ Դավիթ եպիսկոպոսի (1652—1685) ջանքերով կառուցվում է առաջնորդանիստ Ամենափրկչյան վանքը: Այդ մասին է վկայում տաճարի արևմտյան դռան վրայի արձանագրությունը. «Հիմնարկեցաւ Ամենափրկչի վանքս ի թիվն ՌՃԴ (1655), ի թագաւորութեան երկրորդ Շահ-Աբասին և կաթուղիկոսութեան Տեառն Փիլիպպոսի ի ձեռն սուրբ ուխտի Առաջնորդի Դաւթի վարդապետի, կամակցութեամբ և տրօք Ջուղայու ժողովրդոց և աւարտեցաւ ՌՃԺԳ (1664) ամի: Որքան պատարագ և պաշտօնք որք ի սմայ կատարի՝ լիցի մասն և բաժին հարկ կենդանեաց և ննջեցելոց»[9]:

Իրանա-Հնդկաստանի հայոց թեմի աշխարհիկ կառավարիչները ընտրվում էին համայնքի ազդեցիկ հայ ընտանիքներից: Հոգևոր առաջնորդները ընտրությունից հետո հաստատվում էին միմիայն Ամենայն Հայոց կաթողիկոսների կոնդակով: 1646 թվականին, երբ մահանում է Իրանա-Հնդկաստանի ամենաարդյունավոր հոգևոր առաջնորդներից մեկը՝ Խաչատուր վրդ. Կեսարացին, որը նույնպես «Ի Մովսէս կաթուղիկոսէն առաջնորդ կարգեալ էր Ջուղայեցւոց ժողովրդեանն, որք

---

[5] **Առաքել վրդ. Դաւրիժեցի**, Պատմութ. Առաքել վրդ Դաւրիժեցւոյ, Վաղ-պատ, 1896, էջ 202:

[6] **Խաչկեան Հովհաննես**, Գավազանագիր, Կալկաթա, 1876, էջ 2:

[7] Այս մասին տես **Հովհաննիսյան Աշ.**—«Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության», Եր., 1959. գիրք Բ, էջ 99:

[8] **Տէր-Յովհաննեանց Յ.**, «Պատմութիւն Նոր-Ջուղայու», հտ. Բ, էջ 96, Նոր-Ջուղա, 1881:

[9] **Տէր-Յովհաննեանց Յ.**, «Պատմութիւն Նոր-Ջուղայու, հտ. Բ, էջ 3, Նոր-Ջուղա, 1881:

յԱսպահան քաղաքին էին»[10], թեմի ժողովրդի խնդրանքով առաջնորդական պաշտոնի է կոչվում Դավիթ վարդապետը (1652—1683): Ամենայն Հայոց Փիլիպպոս կաթողիկոսի (1633—1655) ձեռամբ բարձրանում է եպիսկոպոսության աստիճանի և 1652 թվականի ապրիլի 23-ի հայրապետական կոնդակով նշանակվում Իրանա-Հնդկաստանի թեմակալ առաջնորդ: «Յիսուսի Քրիստոսի ծառայ Փիլիպպոսի կաթուղիկոս Ամենայն Հայոց... Աստուածապահ քաղաքիդ Սպահանու ժողովրդեան մերում որ ի Ջուղա... եւ ընդ օրհնութեանս ծանիք սիրելիք մեր ի տէր, վի ըստ Առաքելոյ բանին՝ հոգք ամենայն եկեղեցեաց լի մեզ ունիմք... Վասն որոյ և մեր տեսեալ պակասութիւն եկեղեցեաց ձերոց որ այսքան ժամանակ է, որ լուսաւոր հոգի Խաչատուր վարդապետն առԱծ է փոխեր, դուք առանց առաջնորդի էք, ձեռնադրեցաք վիոգևոր որդին մեր զԴաւիթ վարդապետն, և առաքեցաք Ձեզ հովիւ և առաջնորդ, և տուաք նմա իշխանութիւն առաջնորդական որ հովուեսցէ զձեզ...»[11]:

Իրանա-Հնդկաստանի հայոց թեմի հոգևոր իրավասության տակ էին Պարսկաստանի ութ գավառների 74 գյուղերում ապրող հայ գաղթականները: Առաջնորդի հոգևոր իրավասությանն էր ենթակա նաև Նոր-Ջուղա, Շիրազ, Բուշեռ, Թեհրան, Համադան, Ռաշտ և Անզալի քաղաքների հայ բնակչությունը: «Արդ վիճակաւոր քաղաքք Ամենափրկչեան վանի ի Պարսկաստան են Ջուղայ, Շիրազ, Բուշեռ, Թէհրան, Համադան, Ռաշտ և Անզալի: Յառաջին ժամանակս մինչ ի Քաշան՝ ի Ղազբին և ի Դարբանդ ևս կային բնակիչք Հայոց՝ էին ընդ իշխանութեամբ Ամենափրկչեան վանի: Բաց ի քաղաքաց անտի ունի և կութ գաւառս յորս բնակին բազմաթիւ ժողովուրդք, որոց անուանք են Ղարաղան, Մալայիր, Քեապազ, Գեափըլայ, Քեամարայ, Բուրվարի, Փէրիայ և Չարմահալ, որք ընդ ամենայն ունեն կեօթանասուն և չորս գիւղօրայս Հայոց»[12]:

Գաղթական հայությունը, օգտվելով հատկապես Շահ-Աբասի հանդուրժողական քաղաքականությունից, շատ կարճ ժամանակամիջոցում, բացի առաջնորդանիստ Ամենափրկչյան վանքից, շրջակա հայաբնակ գյուղերում և քաղաքներում կառուցում է 70—80 եկեղեցիներ ևս: Այդ մասին է վկայում 1880 թվականին հրատարակված պարսկահայ համայնքների և եկեղեցիների ցանկը[13]:

Նույնը հաստատում է նաև Մեսրոպ Թաղիադյանը իր «Պատմութիւն պարսկաց» աշխատության մեջ: Շահ-Աբասը սկզբնական շրջանում բարյացակամ էր,—գրում է Թաղիադյանը, «վկայ քեզ քաղցրութեան և շնորհաց արքայի՝ այն մեծամեծ ապարանք և երկնաբերձ եկեղեցիք մեր անդանօր և լցին պաշխարին պայծառութեամբ, առաւել ևս չքնաղակերտ կՋուղա քան կԱսպահան կառուցեալ»[14]: Ամեն բանից վեր դասելով հայրենիքից բերված ազգային ու կրոնական ավանդույթները՝ Իրանա-Հնդկաստանի թեմի հայ ժողովուրդը իր կգացմունքներն ու մտածումները անքակտելիորեն կապել էր սրբազան Արարատների փեշերին գտնվող իր բնօրրանին ու քրիստոսահաստատ սրբության սրբոց Մայր Էջմիածնին: Շահ-Աբասը կգալով, որ տրված այդքան արտոնություններից հետո էլ անհնար է գաղթական հայությանը մոռացնել տալ իր Հայրենին, ինչպես նաև «գերեզմանատունք հարց և նախնեաց նոցա և վանօրայք և ուխտատեղիք, ուր դամբարանք են սրբոց, և մանաւանդ մեծահանդէս Աթոռն Ս. Էջմիածին, ուր կայ սուրբ աջն Գրիգորի Լուսաւորչին, որով օրհնի սուրբ մեռոնն. ուստի գնացեալ սփռէ յայգըս Հայոց յամենայն աշխարհ, ուր և իցեն. վասն որոյ ամենայն ազգն Հայոց հնազանդին սրբոյ Աթոռոյն Էջմիածնի և կաթուղիկոսի նորա, որ անդ նստի»[15]:

Արևելյան նշանավոր այս բռնակալը կամենում էր պանդխտության տարված հայությանը վերջնականապես կապել պարսկական հողին: Հայ ժողովրդի ավանդապահ ոգին, հայրենիքի և նրա դարավոր սրբությունների նկատմամբ անկոտրում և անմնացորդ սերը շահ-Աբասին կատաղեցնում էին: Տեսնելով այս ամենը՝ նրա մոտ հղանում է դժոխային մի միտք ևս. հիմքից քանդել Ամենայն Հայոց Մայր Էջմիածինը և նրա բոլոր քարերն ու հողը ուղտերով փոխադրել Պարսկաստան՝ Սպահանում մի նոր Էջմիածին կառուցելու համար: Նա մտադիր էր այնտեղ փոխադրել նաև Ամենայն Հայոց Կաթողիկոսական Աթոռը: Այս ձևով կստիպեր գաղթական հայությանը վերջնականապես կապվել Պարսկաստանին և մոռանալ Ս. Էջմիածինն ու հայրենական մյուս սրբությունները: «Եւ յաւուր

[10] **Առաքել Դավրիժեցի**, Պատմութիւն Առաքել վրդ. Դավրիժեցւոյ, Վաղ-պատ, 1896, էջ 402:

[11] **Տէր-Յովհանեանց Յ.**, Պատմութիւն Նոր Ջուղայու, հտ. Բ, էջ 30, Նոր-Ջուղա, 1881:

[12] **Տէր-Յովհանեանց Յ.**, Պատմութիւն Նոր Ջուղայու, հտ. Բ, էջ 104, Նոր-Ջուղա, 1881:

[13] Նույն տեղ, էջ 240—242:

[14] **Թաղիադյան Մ.**, Պատմութիւն պարսից, Կալկաթա, 1846, էջ 171—172:

[15] **Առաքել Դավրիժեցի**, Պատմութիւն Առաքել վրդ. Դաւրիժեցւոյ, Վաղարշապատ, 1896, էջ 199;

միում գնաց շահն ի նշանակեալ տեղին, էր ընդ նմա և խոջայ Նապարն՝ և այլք ոմանք ի Հայոց, ասաց շահն ընդ խոջայ Նապարին, վասն ձեր շինեմ աստ Էջմիածին, վասն այնմ Էջմիածնի կարօտութիւն կրեալ ճմլեսցին սիրտք ձեր, և հրամայեմ գնալ բաղում ուղտ, ջորի և սայլ, վասն վքար և վհող այնր Էջմիածնի քանդեալ բերցեն աստ, վասն այնու քարով և հողով շինեսցի այս Էջմիածինս, որպէսզի առանց իմիք երկբայութեան հաստատեսցին սիրտք ձեր ի վերայ նոր շինեցելոյս»[16]:

Զարագործ Շահ-Աբասը շատ լավ էր հասկացել, որ անհնար է հայ ժողովրդին կտրել իր ամենամեծ սրբություններից՝ հայրենիքից, Ս. Էջմիածնից և Ս. Գրիգոր Լուսավորչի մասունքներից: «Քանզի ի վերայ Աջոյն և Էջմիածնի ամենայն ազգն Հայոց կապեալ կան»[17]: Հենց այս ճշմարտությունը գիտակցելով՝ նա ցանկանում էր ամեն գնով իրագործել իր դիվային ծրագիրը: Եթե շահը չիրագործեց մեր ժողովրդի մեծագույն սրբությունը քանդելու սոսկալի ծրագիրը, այդ ոչ թե նրա համար էր, որ այն անիրագործելի էր, այլ, երջանիկ պատահականությամբ, նա ընդառաջելով Նոր-Ջուղայի ավանդապահ ու հայրենասեր հայությանը և հատկապես խոջա Նապարի թախանձանքին, բավարարվեց միայն Ս. Էջմիածնի Մայր տաճարի վանական մասերից 15 քարեր քանդելով և դրանք Ս. Լուսավորչի Աջի հետ միասին տեղափոխել տալով Նոր-Ջուղա: Այսպես, կարծեք թե հրաշքով փրկվեց հայոց մեծագույն ու նվիրական սրբավայրը՝ Ս. Էջմիածինը: Իր պանդուխտ ժողովրդի դժբախտ ճակատագրին արժանացած Մայր տաճարի մամռոտած, մեռնաբույր քարերը, որպես նշխար ու սրբություն, առ այսօր էլ պահվում են Նոր Ջուղայի մոտ գտնվող Ս. Գևորգ եկեղեցում, որը կառուցվել է 1611 թվականին[18]:

Դժբախտաբար, Իրանա-Հնդկաստանի հայոց նյութական, հոգևոր և մշակութային կյանքի ծաղկումը տևում է մինչև ԺԷ դարի վերջը: 1694 թվականից հետո, երբ պարսկական գահին է բարձրանում կրոնամոլ, թուլամորթ և մահմեդական հոգևորականության ձեռքին խաղալիք դարձած Հուսեյին շահը, Նոր-Ջուղայի և առհասարակ Իրանա-Հնդկաստանի թեմում ապրող հայ ժողովրդի կյանքը թունավորվում, անտանելի է դառնում: Պարսիկ մոլեռանդ հոգևորականությունը, օգտվելով Հուսեյին շահի (1694—1722) կրոնամոլությունից, պետության ղեկը իր ձեռքը է վերցնում և սկսում հայ ժողովրդի կեղեքման ու բռնի մահմեդականացման գործը: Հարկ է նշել, որ հայ ժողովրդին ազգովին մահմեդականացնելու փորձերը սկսվել էին դեռևս Շահ-Աբասի օրերից: Իր բնաջխարհից արտաքսված գաղթական հայության ներքին ստեղծագործական ուժերը լավագույն ձևով օգտագործելով Պարսկաստանի տնտեսության վերականգնման համար, միևնույն ժամանակ Շահ-Աբասը (1587—1628), որպես ուղղափառ մուսուլման, մշտապես հետապնդում էր իրանահայությանը մահմեդականացնելու նպատակը: Առաքել վրդ. Դավրիժեցին իր պատմության մեջ նկարագրում է բռնի մահմեդականացման մի քանի դեպքեր: Շահ-Աբասը,—պատմում է Դավրիժեցին,—սովորություն ուներ ծպտված մտնել գաղթական հայության մեջ նրանց տրամադրությունները հասկանալու համար:

«Եւ վի սովորութիւն էր այս Շահ-Աբասիս երբեմն-երբեմն, վի այլակերպեալ վինքն՝ ձևանայր իբրև վմի ի վօրականաց՝ և գնայր ի տեղին ուր գնալոց էր»[19]: Ծպտված, հասարակ մի վորականի վգեստներ հագած շահը, հանդիպելով գաղթական մի հայ կնոջ, խընդրում է տասը դրամով, ի սեր շահի, վաճառել իրեն մի հավ: Պանդուխտ հայ կինը, վայրացած, անիծում է Պարսկաստանի միապետին՝ ասելով. «Երանի թէ ոչ էր բերեալ վմեզ՝ վի վտարանդի արարեալ եհան վմեզ ի նախնի աշխարհէն մերմէ, ի բնիկ տեղեաց, և ի հայրենի ժառանգութեանց, և բերեալ աստէն յօտար աշխարհի բնակեցոյց պանդխտութեամբ»[20]:

Գեղջուկ հայ կնոջ անկեղծ այս խոստովանությունը կատաղած Շահ-Աբասը ընդունեց իբրև «վերկայրի սուր»: «Եւ այնուհետև բարձաւ գութ և ողորմ ի սրտէ թագաւորին ընդդէմ Հայոց, և կոչեաց առաջի իւր վվէվիրն, ընդ նմին և վշեխն, որում անունն էր Միր-Ատդուլայ, և հրամայեաց նոցա վօրականօք մտանել ի գաւառսն յայնոսիկ, և ծագէ ի ծագ տաճկացուցանել և թլպատել»[21]: Շահի արձակած այս հրամանը նոր եռանդ տվեց մահմեդական կրոնի սպասավորներին, որոնք վաղուց էին սպասում նման վիճակի ստեղծվելուն: Գաղթական հայությունը փախչում էր դժոխք Փերայի գավառից, որպեսզի մի կերպ ազատվի բռնի մահմեդականացումից:

---

16 Նույն տեղ, էջ 200:

17 **Առաքել Դավրիժեցի**, Պատմութիւն Առաքել վրդ. Դաւրիժեցւոյ, Վաղարշապատ, 1896, էջ 200:

18 Տես **Վահան քահանա Աղանեան**, Նոր Ջուղայի եկեղեցի ուխտատեղիները, Նոր-Ջուղա, 1927, էջ 16:

19 **Առաքել Դավրիժեցի**, Պատմութիւն Առաքել վրդ. Դաւրիժեցւոյ, Վաղարշապատ, 1896, էջ 163.

20 Նույն տեղ, էջ 164.

21 Նույն տեղ, էջ 165.

Բռնությամբ թլփատված հայ քահանաներին, որպես կաշառք, շահի կողմից տրվում էր 40 ոչխար: Խորամանկ այս կարգադրությամբ շահը ցանկանում էր կաշառել հայ քահանաներին, որոնք, ըստ նրան, իրենց ետեվից կտանեին հայ ժողովրդին՝ հեշտացնելով ս·ղգովին նրա մահմեդականացման գործը: Ո՛չ օրենքի ուժը, ո՛չ բռնությունը, ո՛չ նահատակությունը և ո՛չ էլ շահական կաշառքը հաջողություն չբերեցին Պարսկաստանի տերերին: Շահ-Աբասը համոզվեց, որ անհնար է բռնի մահմեդականացնել մի ժողովրդի, որն այնքան ամուր թելերով կապված է իր Եկեղեցուն: Պարսկաստանի տիրակալը, տեսնելով բռնի մահմեդականացման դատապարտված հայության համառությունը և նվիրվածությունը իր անցյալին և սրբություններին, տեղի է տալիս և թույլատրում, որ բռնի թլփատված հայերը վերստին դառնան իրենց քրիստոնեական հավատքին:

Դժբախտաբար, մահմեդական կրոնի սպասավորները չէին կարող հաշտվել այն մտքի հետ, որ իրենց կողքին պիտի ապրեր ոչ մահմեդական մի ժողովուրդ ևս: Հետագայո·մ նրանց հաջողվեց շահի միջոցով հրապարակել մի դաժան օրենք: Ըստ այդ օրենքի, եթե հայ ընտանիքի անդամներից մեկը ընդուներ մահմեդականություն, կդառնար ողջ գերդաստանի միակ ժառանգորդը և կտիրանար իր գերդաստանի ամբողջ ունեցվածքին: «Նաև սահմանեաց օրէն մի խստագոյն թէ՝ ով ոք ի յայգէ հայոց դարձցի ի հաւատոց իւրոց, և մտցէ ի մոլար և անաստուած կրօնս պարսից, ունիլ կարասցէ նա ապատութիւն ըստ հրամանի դատաւորին, և ժառանգեսցէ միայն ժառանգութիւնս տան հայրենեաց իւրոց, զրկելով զայլ ժառանգակիցք իւր՝ որք ի յօրէնս իցեն աստուածպաշտութեան»[22]:

Ընտանիքի հիմքերը խարխլող դաժան այս օրենքն էլ ի զորու չեղավ կոտրելու հայ ժողովրդի համառությունը քրիստոնեությունից հրաժարվելու գործում:

ԺԸ դարում, ինչպես նշվեց, պարսից գահակալները խաղալիք էին դարձել մահմեդական հոգևորականության և խաների ձեռքին: Օգտվելով երկրի անիշխանական վիճակից՝ ընչաքաղց խաները և պետական պաշտոնյաները, որոնց աչքն էր ծակում Նոր-Ջուղայի հայերի անհատնում հարստությունը, կենքի ուժով, սարսափեցնելով, կողոպտում էին իրանահայությանը: Անտանելի այս վիճակին ավելացավ նաև 1722 թ. ավղանների արշավանքը դեպի Պարսկաստան, որը ոչ միայն հիմնահատակ քանդեց Նոր-Ջուղա առաջնորդանիստ քաղաքը, այլև մեծ վնաս հասցրեց ողջ թեմի հոգևոր ու մշակութային կյանքի առաջընթացին: Պարսկաստանի ներքին քաղաքական ու տնտեսական անկայուն վիճակը, ինչպես նաև քրիստոնյաների ֆիզիկական անապահով կացությունը ստիպեցին, որ Իրանա-Հնդկաստանի թեմի հայությունը կանգվածորեն գաղթականության ելնի: Երկրորդ անգամ գաղթականության ելած հայությունը հիմնականում հաստատվեց Հնդկաստանում և Հեռավոր Արևելքի երկրներում: 1851 թվականին Իրանա-Հնդկաստանի թեմի կողմից կազմված մարդահամարից երևում է, որ այդ շրջանում միայն Նոր-Ջուղայում, որը նախապես ուներ 12 հազար տուն, գաղթականությունից հետո մնացել էր ընդամենը 371 տուն[23]:

ԺԷ դարի Իրանա-Հնդկաստանի հայոց կրոնական, տնտեսական ու մշակութային անօրինակ փայլը մեծապես հրապուրեց նաև հռոմեական Եկեղեցուն, նոր թափով ուժեղացրեց քարոզչական գործը այլադավան քրիստոնյաների: Այդ նպատակով ԺԶ—ԺԷ դարերում Հռոմի պապական Աթոռի կողմից հիմնադրվեցին մի շարք միաբանություններ՝ Դոմինիկյաններ, Հիսուսյաններ, Օգոստինյանք, Կարմելյանք և Կապուչինյանք[24], որոնց հիմնական նպատակն էր ոչ կաթոլիկ ժողովուրդներին վերստին «քրիստոնյա» մկրտել:

ԺԷ դարում, Արևելքում գործող հռոմեական Եկեղեցու հավատքի տարածման առաջատար այս միաբանությունները իրենց խոստումներով փորձում էին հավատացնել խավարի ու հուսահատության մեջ գտնվող հայ ժողովրդին, որ միայն կաթոլիկությունը պիտի լուսավորի և փրկի նրան: Հարկ է նշել, որ Նոր-Ջուղա և Սպահան հաստատված կաթոլիկ քարոզիչներից ամենավտանգավորները Հիսուսյաններն էին, որոնք իրենց գործունեության ճանապարհին միջոցների մեջ ոչ մի խտրություն չէին դնում: Իգնատիոս Լոյոլայի հոգևոր որդիները, շնորհիվ իրենց կուռ կազմակերպության, Նոր-Ջուղայում սկզբնական շրջանում որոշակի հաջողության հասան: Նրանց հաջողվեց կառավարական հատուկ արտոնագրով Նոր-Ջուղայում և Սպահանում ունենալ իրենց վանքն ու դպրոցը: Գործի դնելով իրենց բոլոր հնարքները՝ նրանք կարողացան նույնիսկ իրենց ենթարկել հայկական մի քանի ազդեցիկ տներ: Նոր-Ջուղայի աչքի ընկնող գերդաստաններից մեկը՝ Շահ-

[22] **Խաչատուր վրդ. Ջուղայեցի**, Պատմութիւն Պարսից, Էջմիածին, 1905, էջ 111—112:

[23] Այս մասին տես «Բազմավեպ», Վենետիկ, 1904, էջ 235:

[24] Այս մասին տես **Կոստանյան Կ.**, «Հայագիտությունը Արևմտյան Եվրոպայում» աշխատությունը, Թիֆլիս, 1910:

բիմանյանները, ոչ միայն համակրեցին, այլև ընդունելով կաթոլիկություն, իրենց դիրքով ու նյութական միջոցներով սատար հանդիսացան կաթոլիկ քարոզիչների լայն գործունեությանը: ԺԷ դարում հռոմեական Եկեղեցին առաջնային կարևորություն էր տալիս Իրանա-Հնդկաստանի հայոց կաթոլիկացմանը:

Թեմի ժրաջան հոգևոր առաջնորդներից շատերը կարողացան վստահորեն և արդյունավետ կերպով պայքարել եվրոպական կրթություն ստացած կաթոլիկ քարոզիչների դեմ: Այդ պայքարում Իրանա-Հնդկաստանի ոխտապահ հայ եկեղեցականությունը ոչ միայն փրկեց մեր Եկեղեցու դավանանքը, այլև գաղափարական իր պայքարով ցրեց ողջ պարսկահայության գլխին կուտակված ձուլման ահավոր վտանգը:

Կաթոլիկ քարոզիչների գործունեության դեմ Իրանա-Հնդկաստանի հայոց թեմում առաջին պայքարը կազմակերպել և գլխավորել է Խաչատուր վրդ. Կեսարացին (1620—1646), որը Մայր Աթոռից իր հետ տանելով Սյունյաց դպրոցի շունչն ու հոգին՝ իր առաջնորդության տարիներին Ամենափրկչյան վանքում իր շուրջը հավաքեց մի քանի կարող եկեղեցականներ, հիմնեց դպրոց, ստեղծեց տպարան, որը ողջ Արևելքում փաստորեն առաջինն էր: Ինքնաստեղծ այդ տպարանի մամլիչների տակից դուրս եկած դավանաբանական ու հայրենասիրական մատյանները պատնեշելու եկան ողջ պարսկահայությանը՝ ընդդեմ կրոնափոխության: Խաչատուր վրդ. Կեսարացու դպրոցը եղավ այն դարբնոցը, որտեղից դուրս եկած շրջանավարտները իրենց ուսերին տարան ոչ միայն թեմի լուսավորության գործը, այլև մեծ հաջողությամբ պայքար կազմակերպեցին կաթոլիկ քարոզչության դեմ: Կաթոլիկները, ոգևորված լեհահայության մեջ ունեցած իրենց հաջողություններից, այս անգամ իրանահայության մոտ էին եկել հավատափոխության մեծ ճակատամարտ տալու ընդդեմ Հայաստանյայց Եկեղեցու:

1688 թվականին Հիսուսյան քարոզիչները, հաստատվելով Նոր-Ջուղայում, Սպահանում, կառուցեցին իրենց եկեղեցին ու դպրոցը և նոր թափով վերսկսեցին իրենց պառակտիչ գործունեությունը: Այդ օրերի հայոց թեմակալ առաջնորդ, քաջակորով Տ. Ստեփանոս եպիսկոպոսը (1684—1695) շատ լավ էր հիշում երբեմնի ծաղկուն ու շենշող լեհահայ գաղութը, որն այնքան անարդար կերպով կոհը դարձավ կաթոլիկ Եկեղեցու հանցավոր հարձակման: Հիսուսյանները իրենց դպրոցների և եկեղեցիների դռները լայն բանալով հայության առջև՝ փորձում էին հայ մատաղ սերնդի կրթության և դաստիարակության գործն ամբողջությամբ իրենց ձեռքը վերցնել, հավատալով, որ այդ պիտի արագացներ ու հեշտացներ հայ ժողովրդի կաթոլիկացման գործը: Կանգնած լինելով ճակատագրական վտանգի դեմ հանդիման՝ Տ. Ստեփանոս եպիսկոպոսը միջոցներ և ուղիներ էր փնտրում իր հոտին հեռու պահելու կաթոլիկ քարոզիչների մոլորություններից: Ի տես հայության ծոցում ստեղծված ալեկոծ այս վիճակի 1689 թվականին հայոց համայնքին օգնության է գալիս նաև Սուլեյման շահի հրամանը Հիսուսյանների քարոզչության դեմ, որով երկրից վտարվում են Հիսուսյան քարոզիչները, որովհետև «օտարք ի սահմանաց Եւրոպիոյ եկեալ ի Պարս խռովեն վխաղաղութիւն ժողովրդեանն Հայոց»[25]:

ԺԸ դարի սկզբներին պապականության վտանգը նորից է կախվում Իրանա-Հնդկաստանի հայոց գլխին: Տեսնելով կաթոլիկ կղերի ձեռքից քաջած այն տառապանքները, որի մեջ գտնվում էր Իրանա-Հնդկաստանի թեմի հայ ժողովուրդը, Աղեքսանդր Ա Ջուղայեցի կաթողիկոսը (1706—1714) հատուկ կոնդակով դիմում է Կղեմես ԺԱ Պապին սաստելու պարսկահայության մեջ խռովություն սերմանող կաթոլիկ քարոզիչներին, որովհետև «յուսեն նոքա զժողովուրդն և յարուցանեն զաղմուկ խռովութեան, որով անունն քրիստոնէութեան հայհոյի ի մէջ հեթանոսաց, և ի դարման նոցին խնդրեաց արձակել զգիր հրամանի առ նոյն քարոզիչսն սակս դադարելոյ նոցա ի խռովայուզութեանց անտի»[26]: Ինչպես երևում է, Հայոց Հայրապետի այս բողոք-կոնդակն էլ չտվեց սպասված արդյունքը, որովհետև դրանից հետո կաթոլիկ քարոզիչները է՛լ ավելի ուժեղացրին քայքայիչ իրենց քարոզչությունը: Օրհասական այդ վիճակից դուրս գալու միակ ելքը մնում էր բողոքել երկրի միապետին: 1723 թվականին թեմի ողջ հայության անունից Իրանա-Հնդկաստանի թեմակալ առաջնորդ Մովսես եպիսկոպոսը (1706—1725) բողոքագրով դիմեց Շահ Սուլթան Հուսեյինին, որից հետո միայն Հիսուսյանները դադարեցին հայ երեխաներին վերցնել իրենց դպրոցներում ուսանելու: Զգալով իրենց համար գործելու արդեն աննպաստ պայմանները՝ Հիսուսյանները ժամանակավորապես կարծեք թե հանգիստ թողին իրանահայությանը: Սակայն 1841 թվականին Հռոմեական Եկեղեցու քարոզիչները նոր թափով ու կատաղությամբ

[25] **Տէր-Յովհաննեանց**, Պատմութիւն Նոր-Ջուղայու, հատ. Բ, էջ 265, Նոր Ջուղա, 1881:

[26] **Տէր-Յովհաննեանց Յ.**, Պատմութիւն Նոր-Ջուղայու, հատ. Բ., էջ 268, Նոր-Ջուղա, 1881:

սկսում են իրենց քայքայիչ գործունեությունը՝ իրենց կողմը գրավելով մի քանի կուսակրոն ու ամուսնացյալ եկեղեցականներ: Նախադեպը չունեցող այս դեպքը ալեկոծում է պարսկահայ ողջ գաղթօջախը, բայց շնորհիվ թեմակալ առաջնորդ Խաչատուր եպիսկոպոսի (1838—1842) եռանդուն գործունեության, հնարավոր է դառնում վերականգնել թեմի խաղաղությունը: ԺԹ դարի կեսերից հետո կաթոլիկ Եկեղեցին, կգալով իր անպորությունը, թուլացրեց իր քարոզչական գործունեությունը Իրանա-Հնդկաստանի թեմում, որն այլևս վտանգ չէր ներկայացնում: Իրանա-Հնդկաստանի թեմի հիմնադրման օրից Արևելքում գործող կաթոլիկ Եկեղեցու վեց-յոթ միաբանություններ իրենց տխրահռչակ գործունեությամբ անչափելի վիշտ ու տառապանք բերին հայ ժողովրդի պատվական այդ հատվածին, բայց, փառք Աստուծո, նրանց այդպես էլ չհաջողվեց Իրանա-Հնդկաստանի հայոց թեմը երկրորդ Լեհաստան դարձնել:

Ֆրանսիացի մեծ ճանապարհորդ Շարդենը, խոսելով կաթոլիկ Եկեղեցու կողմից գործադրված միջոցների մասին հատկապես Իրանա-Հնդկաստանի հայոց նկատմամբ, գրում է. «...Հայերը միշտ պահպանել են իրենց հին ժամասացությունը, և այս հանգամանքը կարելի է համարել ուղղակի ապշեցուցիչ, եթե չասենք գերբնական, որովհետև նրանք տասը և մեկ դար գտնվում են մահմեդականների տիրապետության տակ...: Սակայն, չնայած այս պայմաններին, նրանց հավատը, ինչպես արդեն ասել եմ, մնացել է անսասան, և նրանք պահում են այդ հավատը, չկամենալով փոխել մի ուրիշի հետ, անխախտ տանելով մահմեդականների, իրենց տերերի անսահման ճնշումները, ինչպես նաև հռոմեական առաքելությունների բոլոր փորձերը, որոնք երկու դարի ընթացքում անպտուղ ձգտում են իրենց միսիոներների, քահանաների և վարդապետների օգնությամբ գրավել նրանց դեպի իրենց դավանությունը: Ես խոսքեր չունեմ նկարագրելու այն խորամանկությունները ու ծախսերը, որոնց այդ նպատակով դիմում էր Հռոմի Աթոռը, սակայն ոչ մի բան ցանկացած հետևանքներին չհասցրեց...»[27]:

Շնորհիվ Մայր Աթոռի գործնական օգնության և թեմակալ առաջնորդների անձանձրույթ ու նվիրված գործունեության, Իրանա-Հնդկաստանի հայոց թեմը կաթոլիկ Եկեղեցու համար եղավ ու մնաց չգրավված այն բարձունքը, որին հասնելու համար հռոմեական Եկեղեցին քիչ ջանքեր չթափեց՝ այդ կողմերն ուղարկելով իր քարոզիչների ամենամոլեռանդներին, որոնք, հակառակ իրենց բոլոր ջանքերին, չկարողացան հայրենական ավանդություններով ապրող ու շնչող այդ թեմը պոկել ու օտարացնել իր մորից՝ Ս. Էջմիածնից:

ԵՂԻՇԵ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ

[27] Լեո, Երկերի ժողովածու, հատ. երրորդ, էջ 428—429, Երևան, 1969:

(Շարունակելի)